ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"15" հուլիսի 2024 թ. N 1610-Ա

ՀՐԱՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի թիվ 14 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Գեղարքունիքի մարզի Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման կրկնակի մրցույթում հաղթող չճանաչել և 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 46-րդ կետի պահանջներին համապատասխան հայտարարել նոր մրցույթ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանին:

7/15/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2024թ.

N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 14

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

8 հուլիսի 2024թ. ք. Երևան

2024 թվականի հուլիսի 8-ին ժամը 11:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Խ. Սողոմոնյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Դ. Մելքոնյանը

<u>Օրակարգում՝</u>

Գեղարքունիքի մարզի Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթի անցկացում:

Արձանագրվեց՝

Գեղարքունիքի մարզի Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթին «Արսմաշ-ավտո» ՍՊ ընկերության կողմից հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոտրանսպորտային միջոցները չեն համապատասխանում «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 018/2011) պահանջներին:

Որոշվեց՝

Ղեկավարվելով՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝

1" Չթույլատրել «Արսմաշ-ավտո» ՍՊ ընկերությանը մասնակցել Գեղարքունիքի մարզի Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթին:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Դ. Մելքոնյան